Հանրապետական
Մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ «ՀՀ Տավուշի մարզի Բաղանիսի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

Թեմա՝ Արժեքային համակարգի ձևավորումը առարկայի դասավանդման շրջանակներում

Վերապատրաստող, մենթոր՝ Աննա Անտոնյան

Ուսուցիչ՝ Սամվել Ղուզանյան

2023

Բովանդակություն

Ներածություն _____ էջ 3-4

Գլուխ 1 _____ էջ 5- 12

Գլուխ 2 _____ էջ13-16

Իմ փորձառությունը _____ էջ 17-18

Եզրակացություն _____ էջ 19-20

Գրականության ցանկ _____ էջ 21

Ներածություն

՝Հայրենասիրությունը մարդկային
առաքինությունների թագն ու պսակն է՛
ԳարեգինՆժդեհ

Հետազոտական աշխատաքը կրում է ՝ Արժեքային համակարգի ձևավորումը առարկայի դասավանդման շրջանակներում՛ վերնագիրը: Թեման ընտրելիս հաշվի եմ առել թեմայի արդիականությունը և ժամանակակից հասարակության առջև ծառացած մի շարք կարևորագույն խնդիրներ: Արդի հասարակության համար կարևորագույն խնդիրներից է բարոյական, ազգային-հասարակական նորմերի ճիշտ արժևորումը, ազգային դիմագծի պահպանումը,նոր սերունդների գիտակցության մեջ այդ նորմերի ամրակայումը և դաստիարակության գործում դրանց կիրառումը:Յուրաքանչյուր ոք,ով ուսուցչի բարձր կոչմամբ մուտք է գործում կրթական միջավայր, գիտակցում է, որ ունի իր ուսերին դրված առաքելություն՝ այն է կրթելու և դաստիարակելու հայրենիքին և պետությանը արժանի, պատվախնդիր,բարոյական,ազգային և ավանդական արժեքները համամարդկային արժեքների համադրմամբ առաջնային և բարձր պահող անհատներ:Յուրաքանչյուր անձի արժեքային համակարգի ձևավորման հիմքում դրվում է ճշմարտությունը և սերը:Ի սկզբանե երեխայի մեջ պետք է սերմանել սեր հայրենիքի,ազգի,հավատի,ընտանիքի,ազգային արժեքների նկատմամբ,իսկ ժամանակի ընթացքում այդ սերը պետք է մեծացնել և ավելացնել,հասցնել գիտակցական ամենաբարձր մակարդակին:Այդ ամենի համար պետք է կարևորագույն բոլոր արժեքները սինթեզվեն և դառնան կուռ ամբողջություն:Կարևոր արժեք է համարվում ճշմարտությունը, հատկապես բարու և գեղեցիկի հետ կապվելիս: Անձի մասին կարելի է դատել նրան առավել բնորոշ արժեքներով,որոնք գոյացնում են անձի ներաշխարհը:Իսկ ինչ վերաբերում է ազգային արժեքներին,դրանք բախտորոշ նշանակություն ունեն և ձևավորվում են պատմական զարգացման ընթացքում,կազմում ներկա կեցության հիմքը և դառնում բնականոն գոյության և անխափան զարգացման երաշխիքը:Ժամանակակից աշխարհում տեղի ունեցող որակական և բովանդակային բազմաթիվ փոփոխություններ կարծես մարտահրավերներ են ստեղծում արժեքային համակարգում՝ կշեռքի մի նժարին դնելով ազգային-ավանդական արժեքները,մյուսին՝ համամարդկային արժեքները:

Հետազոտության նպատակն է՝

Ներկայացնել և ուսումնասիրել հանրակրթական դպրոցներում արժեքային համակարգի, հանդուրժողականության, վարվելակերպի ձևավորումը աշակերտների մոտ:

Հետազոտության հարց

Ի՞նչ ազդեցություն ունի առարկայի դասավանդումը արժեքային համակարգի ձևավորման գործընթացում:

Հետազոտության խնդիրներն են

1. Ուսումնասիրել թեմային վերաբերող գիտաուսումնական գրականություն:
2. Պարզել՝ ինչ ասել է 'արժեքային համակարգ', դրա բովանդակությունը առարկայի դասավանդման համատեքստում:
3. Լուսաբանել արժեքային համակարգի ձևավորման գործընթացը և յուրացումը:

Թեմայի արդիականությունը

Այսօր աճող սերնդի դաստիարակության գործն ընթանում է տարբեր հանգամանքների ազդեցության ներքո՝ ժողովրդագրական, ազգային, մշակութային, ընտանեկան, կրթական,հասարակական,սոցիալական և այլն:Հաշվի առնելով բազմաթիվ այս և այլ հանգամանքներ՝ ժամանակակից մանկավարժության համար խնդիր է դառնում սովորողների ազգային գիտակցության ձևավորումը սեփական ժողովրդի պատմության ու մշակույթի հենքի վրա՝ չանտեսելով համամարդկային արժեքները:Կրելով վերոնշյալ և այլ հանգամանքների ներգործությունը, ընտրությամբ յուրացնելով դրանց ազդեցությունը՝ աշակերտը հաղորդակցվում է հասարակական մշակույթին և ձևավորվում իբրև ստեղծագործական անհատականություն:

Գլուխ 1

Ինչ է արժեքային համակարգը, դրա բովանդակությունը առարկայի դասավանդման համատեքստում

«Արժեհամակարգ» հասկացությունը մանկավարժական գիտության մեջ ըմբռնվում է բավական լայն շառավիղով:Առավել ընդունված է այն ընկալումը,որ արժեհամակարգը մարդու բարոյական,գեղագիտական,հոգևոր,իմացական, մշակութային և էթնիկական արժեքների համախումբն է, որն անհրաժեշտ է անձի ներդաշնակ,բազմակողմանի ձևավորման և զարգացման համար:Արժեքների թվարկված համախմբերից որևէ մեկին գերապատվություն տալը կնշանակեր ոչ մանկավարժական մոտեցում խնդրին:Արժեհամակարգը լիակատար է և համեմատաբար ավարտուն բոլոր ներառված համախմբերի ներդաշնակ փոխլրացման պայմաններում:Ահա թե ինչու «արժեհամակարգ» հասկացությունը նաև զուրկ է խիստ որոշակի ստուգությունից:Արժեհամակարգի ձևավորման և նրա հարաբերական կայունության ապահովման համար հանրակրթության բնագավառում կարևոր և անփոխարինելի նշանակություն ունեն բոլոր ուսումնական առարկաները, որոնց թվում,այնուամենայնիվ, արժեքների ձևավորման առումով չափազանց մեծ է հումանիտար ոլորտի ուսումնական առարկաների դերը: Արժեքների աշխարհը բազմազան է:Մեր ունեցած նյութական, հոգեկան,սոցիալական,բարոյական,ճշմարտային,գեղագիտական,կրոնական, ազգային և այլ արժեքները կազմում են մեր արժեքային համակարգը և պայմանավորում մեր արժեքային կողմնորոշումը:Անհրաժեշտ է հաշվի առնել նաև, որ ի տարբերություն գիտելիքի և կարողության,հոգևոր արժեքների ձևավորումը շատ բարդ գործընթաց է և իրականացվում է հետևողական ու երկարատև աշխատանքի արդյունքում:Խնդիրը բարդանում է նրանով,որ կրթական նման գործընթացի արդյունքը անմիջապես հնարավոր չէ տեսնել, ստուգել և վերահսկել: Աշակերտի արժեքների ձևավորման վրա ազդող գործոններից են ավանդական միջոցները, այսինքն՝ աշակերտի մեջ աշխարհի նկատմամբ վերաբերմունքի և հասարակության հետ հարաբերության, սեփական անձի նկատմամբ վերաբերմունքի ձևավորումը ընտանիքի և սոցիալական միջավայրի միջոցով: Սակայն սովորողների կողմից այդ միջավայրին բնորոշ արժեքների,կանոնների,չափանիշների, հայացքների յուրացումը միշտ չէ,որ համապատասխանում է հասարակության կողմից ընդունված արժեքներին և

խրախուսելի չափանիշներին:Ավանդական միջոցների յուրացումը լինում է չգիտակցված՝ վարքի ընդունված կաղապարներն ընդօրինակելու միջոցով:Այս առումով իրավացի է Մ. Մոնտենը. «…Մենք որքան ասես կարող ենք պնդել մերը, սակայն սովորույթն ու համընդհանուր կանոնները մեզ քարշ են տալիս իրենց ետևից» : Յուրաքանչյուր դասի ժամանակ ուսուցիչը որոշակի դաստիարակչական խնդիրներ է լուծում՝ հաշվի առնելով տվյալ առարկայի և թեմայի ուսումնասիրման հիմնական խնդիրները,որոնք ներկայացված են առարկայական ծրագրերում:Նա առանձնացնում է ընդհանուր դաստիարակչական խնդիրները, որոնք առանձին աշակերտների մոտ հաճախակի են դրսևորվում:Ուսուցիչը ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի ընտրության միջոցով (անհատական, խմբային, էքսկուրսիա, դասղեկական ժամ, արտադասարանական միջոցառումներ և այլն) առավել արդյունավետ է դարձնում աշակերտների արժեհամակարգային դաստիարակչական խնդիրների լուծումը:Օրինակ՝ խմբային աշխատանքի ժամանակ աշակերտները սովորում են ուշադրությամբ վերաբերվել միմյանց, միասին հաղթահարել դժվարությունները,միասին ձեռք բերել հաջողություններ, լսել հակադիր կարծիքներ,ընդօրինակել միմյանց և այլն:Հասակակիցների խմբում աշակերտն ավելի ազատ է արտահայտում իր մտքերն ու դատողությունները, գործում է անկաշկանդ, ինչն էլ նպաստում է ուսուցման արդյունավետ կազմակերպմանը:Անհատական աշխատանքում դաստիարակվում է աշակերտների ինտելեկտուալ պատրաստականությունը դժվարությունները հաղթահարելու գործում,ձևավորվում են համառության, ինքնակազմակերպման և ինքնավերահսկման ընդունակություններ: Կրթության նպատակը անհատին ոչ միայն գիտելիքներով զինելն է, այլև նրա մեջ բարոյական որոշակի հատկանիշներ՝ արժեքներ ձևավորելը:Արժեքային կրթությունն ի սկզբանե կրթության անքակտելի բաղադրիչն է եղել: Ինչպես ամբողջ աշխարհում, Հայաստանում էլ այսօր արժեքային կրթությունը հասարակությանը հուզող խնդիրներից մեկն է:Մեզանում արժեքային կրթության նկատմամբ ավանդաբար ընդունված է հետևյալ մոտեցումը. դպրոցն ու ծնողները փորձում են բարոյական ժառանգությունը փոխանցել նոր սերնդին՝ նրանց մեջ լավ արժեքներ սերմանելով և հաստատելով բարոյական այլևայլ հատկանիշների ճշմարտացիությունը:

Արժեքների բուրգի գագաթին գտնվող նվիրական ու մեծագույն արժեքի՝ հայրենասիրության զգացումը դաստիարակելու համար ռուս գրականության դասընթացը բազմաթիվ հիանալի հնարավորություններ է ընձեռում:Կարելի է, դիցուք,հիշատակել Լև Տոլստոյի «Պատերազմ և խաղաղություն» էպոպեայի

ուսուցումը, որն իրականացվում է այն գերագույն նպատակադրումով, որ նրանով կարելի է ոչ միայն ռուս, այլև ցանկացած այլազգի դպրոցականի հոգում վառել հայրենասիրության կրակը՝ վեպի հերոսների,նրանց գործողությունների, անձնազոհության ու հայրենանվիրության բացահայտումներով: Հայրենասիրությունն այն մեծագույն արժեքն է, որ հարգանք ու պատկառանք է հարուցում, նույնիսկ երբ դրսևորվում է հակառակորդի կամ թշնամու մոտ: Ի դեպ, յուրաքանչյուր ուսուցիչ ունի որոշակի հեղինակ կամ ստեղծագործություն, որը նրան ամենադյուրին կերպով է օգնում իր մանկավարժական խնդիրները լուծելու,տվյալ դեպքում՝ հայրենասիրության բարձրագույն արժեքը սաների հոգիներում սերմանելու համար: Մեզ համար դա տարիներ ի վեր եղել և մնում է համաշխահարհային գրականության այդ հսկայի՝ Լ.Տոլստոյի վերոնշյալ ստեղծագործությունը:

Սովորողի անձի արժեքների ձևավորման վրա ազդող մյուս գործոնը միջանձնային հարաբերություններն են կամ իրենց համար հեղինակավոր, երևելի մարդկանց հետ շփումները (ծնողներ, ուսուցիչներ, մեծահասակներ, ընկերներ և այլն):Բնական է, որ այդ հեղինակավոր անձինք կարող են լինել նաև աշակերտի վրա ներգործող հասարակական այս կամ այն կազմակերպությունների անդամները,դպրոցի տնօրենը, դասղեկը, ուսուցիչը և այլն:Աշակերտը նրանցից կարող է ստանալ արժեքների վերաբերյալ ինչպես դրական մոդելներ, այդպես նաև բացասական: Ընդսմին՝ բացասական մոդելները հակում ունեն ձևավորվելու ավելի արագ և անդառնալի բացասական ազդեցություն կարող են ունենալ սովորողի անձի արժեքային ճիշտ դաստիարակության վրա:Հետևաբար արժեքների դաստիարակության այս բնագավառը պահանջում է մանկավարժական խստագույն վերահսկողություն և ըստ հարկի՝ նաև միջամտություն:Աշակերտի արժեքների ձևավորման խնդիրները բնականաբար լուծվում են ոչ միայն ընտանիքում, այլ նաև ուսումնական հաստատություններում՝ ուսումնադաստիարակչական գործընթացի միջոցով:Ուսուցման դաստիարակչական ներգործությունը օբյեկտիվ օրինաչափություն է, որովհետև աշակերտների համար ուսուցումը գործունեության հիմնական տեսակն է, դրա համար էլ այն կարևոր դեր է կատարում նրանց անձի ձևավորման գործում:Ուսուցման գործընթացի դաստիարակչական ներգործության հարուստ աղբյուր է բուն գործընթացի բովանդակությունը, որովհետև ընտրելով դաստիարակչական առումով հիմնական գաղափարները,օրենքները և հասկացությունները՝ ուսուցիչը հնարավորություն է ստանում առարկայական ծրագրերի բովանդակության յուրացման միջոցով աշակերտների մեջ սերմանել քաղաքական, իրավական, բարոյական, գեղագիտական, բնապահպանական և այլ գիտելիքներ ու վերաբերմունք: Կրթության բովանդակության հետ միասին

ուսուցման մեթոդները ներգործում են աշակերտների ճանաչողական ունակությունների վրա՝ նրանց հնարավորություն տալով ստացած գիտելիքները կյանքում օգտագործելու ըստ նպատակի:Սովորողների անձի արժեքների ձևավորման առումով կրթության մեջ ուրույն նշանակություն ունեն ուսուցանվող աշխարհագրական գիտելիքները, որի արդյունքում աշակերտը կգիտակցի երկրագնդի բնական ռեսուրսների սահմանափակությունը,կմերժի բնության նկատմամբ սպառողական հոգեբանությունը,կկարևորի բնակչության կրթական մակարդակի շարունակական բարձրացման անհրաժեշտությունը՝ որպես պետության զարգացման գլխավոր երաշխիք:Արժեքային համակարգի ներկայացվող պահանջները արտահայտվում են սովորողի, որպես անձի և քաղաքացու ցուցաբերած վերաբերմունքի, դիրքորոշման, վարքի և գործելակերպի միջոցով:Ահա թե ինչու դպրոցում աշխարհագրության դասավանդումը դուրս է գալիս սոսկ առարկա ուսուցանելու նեղ շրջանակից և վերածվում է սովորողների գեղագիտական, բարոյական, հոգևոր արժեհամակարգը ձևավորելու մի միջոցի,որի դերը չպետք է թերագնահատել:Իբրև աշխարհագրության ուսուցչուհի՝ սեփական փորձով կարող ենք հավաստել, որ աշակերտի արժեհամակարգը պետք է ձևավորել ներդաշնակության սկզբունքով,որում իր ուրույն տեղը պետք է ունենա հնարավորինս սերտ հաղորդակցումը օտար երկրներին և մշակույթին՝ որպես մշակույթի մի տարատեսակի:Արժեքների բուրգի գագաթին գտնվող նվիրական ու մեծագույն արժեքի՝ հայրենասիրության զգացումը դաստիարակելու համար աշխարհագրության դասընթացը բազմաթիվ հիանալի հնարավորություններ է ընձեռում: Հայրենասիրությունն այն մեծագույն արժեքն է, որ հարգանք ու պատկառանք է հարուցում, նույնիսկ երբ դրսևորվում է հակառակորդի կամ թշնամու մոտ: Ի դեպ, յուրաքանչյուր ուսուցիչ ունի որոշակի աշխարհագրական պատկերացումներ,որը նրան ամենադյուրին կերպով է օգնում իր մանկավարժական խնդիրները լուծելու,տվյալ դեպքում՝ հայրենասիրության բարձրագույն արժեքը սաների հոգիներում սերմանելու համար:Ուսուցչի քաղաքացիական դիրքորոշումը, ձգտումը՝ դաստիարակել բարձր արժեքներ կրող քաղաքացիներ,նրա մտահորիզոնը, հասարակական լայնախոհությունը, սերը երեխաների նկատմամբ ուսումնական գործընթացի արժեքային դաստիարակչական ներգործության բարձրացման կարևոր պայմաններից են: Ընդ որում՝ դաստիարակչական խնդիրների լուծումը պայմանավորված է նաև նրանով, որ ուսուցիչը համագործակցային փոխհարաբերությունների միջոցով նախատեսում է աշակերտների ոչ միայն մտավոր, այլև բարոյական, գեղագիտական ու ֆիզիկական դաստիարակության խնդիրների նկատմամբ համակողմանի մոտեցում:Ուսուցման գործընթացում

լուծվում են սովորողների կրթական, դաստիարակչական կամ արժեքային և ընդհանուր զարգացման խնդիրները:Դրա համար յուրաքանչյուր դասի դաստիարակչական խնդիրների լուծումը նախատեսում է ոչ թե մեկուսացված կամ առանձին մոտեցում, այլ գիտելիքների ու կարողությունների, արժեքային որակների, կամքի, բնավորության, զգացմունքների, հոգեբանական տարբեր դրսևորումների միաժամանակյա և փոխկապակցված մոտեցում:«Եթե դուք ունակ եք որոշելու երեխայի ունակությունն ու նրա ուժը, դուք պետք է գիտենաք, որ ամենամեծ ուրախությունը՝ դժվարությունների հաղթահարման, նպատակին հասնելու, գաղտնիքի բացահայտման ուրախությունը հաղթանակի բերկրանքն է ու ինքնուրույն դառնալու,տիրելու ու տիրապետելու երջանկությունը»:Յուրաքանչյուր դասի ժամանակ ուսուցիչը որոշակի դաստիարակչական խնդիրներ է լուծում՝ հաշվի առնելով տվյալ առարկայի և թեմայի ուսումնասիրման հիմնական խնդիրները, որոնք ներկայացված են առարկայական ծրագրերում:Նա առանձնացնում է ընդհանուր դաստիարակչական խնդիրները, որոնք առանձին աշակերտների մոտ հաճախակի են դրսևորվում:Ուսուցիչը ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի ընտրության միջոցով(անհատական, խմբային, էքսկուրսիա, դասղեկական ժամ, արտադասարանական միջոցառումներ և այլն) առավել արդյունավետ է դարձնում աշակերտների արժեհամակարգային դաստիարակչական խնդիրների լուծումը: Օրինակ՝ խմբային աշխատանքի ժամանակ աշակերտները սովորում են ուշադրությամբ վերաբերվել միմյանց,միասին հաղթահարել դժվարությունները, միասին ձեռք բերել հաջողություններ, լսել հակադիր կարծիքներ, ընդօրինակել միմյանց և այլն:Հասակակիցների խմբում աշակերտն ավելի ազատ է արտահայտում իր մտքերն ու դատողությունները, գործում է անկաշկանդ, ինչն էլ նպաստում է ուսուցման արդյունավետ կազմակերպմանը:Անհատական աշխատանքում դաստիարակվում է աշակերտների ինտելեկտուալ պատրաստակամությունը դժվարությունները հաղթահարելու գործում,ձևավորվում են համառության, ինքնակազմակերպման և ինքնավերահսկման ընդունակություններ:«Հատկապես դեռահասների առանձնահատուկ զգացմունքայնությունը,ինքնասիրությունը, որ հաճախ արտահայտում է նրանց ինքնահաստատման և հասուն երևալու ձգտումը, մանկավարժից պահանջում է անհրաժեշտ նրբանկատություն, հարգանք դեռահասի անձի նկատմամբ»:Ելնելով վերոգրյալից՝ կարող ենք եզրահանգել, որ արժեքային համակարգի ձևավորումը ժամանակակից դպրոցի գերխնդիրն է և մշտապես պետք է լինի մանկավարժների ուշադրության կենտրոնում: Երեխաների կրթության մասին խոսելիս մենք հաճախ օգտագործում ենք «արժեքներ» հասկացությունը: Բոլորս կարևորում ենք արժեքների ձևավորումը

գալիք սերնդի մոտ և միգուցե այդ բառին ինչ-որ ենթագիտակցական իմաստ ենք հաղորդում:Փորձենք ձևակերպել, թե ինչ է ի վերջո «արժեք» ասածը: Արժեքը երևույթ է մեր կյանքում, որի դիմաց մենք գին ենք վճարել:Վճարի «արժույթը» կարող է տարբեր լինել՝ տվայտանքներ,հույզեր,այլ արժեքների զոհաբերություն, հարազատների,հայրենակիցների կամ նախնիների կորուստ, կորցրած հող, հայրենիք և այլն: Արժեքը հնարավոր չէ ստանալ հեշտությամբ, այն պետք է վերապրել, անցկացնել քո միջով,զգալ ու գիտակցել:Այդ ամենի դիմաց մենք ստանում ենք իմաստներ, քանի որ արժեքներն են իմաստավորում կյանքը: Առանց արժեքների կյանքը դատարկ է:Հեշտ, առանց կորուստների և հաղթահարումների ապրելը երբեք չի երջանկացնում հենց այն պատճառով, որ չի բերում արժեքների ձևավորման:Արժեքների մեծ մասը սնվում է էթիկական նորմերից, ձևավորվում է դրանց շնորհիվ:Էթիկական նորմերը անհրաժեշտ են մարդկանց համակեցությունը ապահովելու համար՝ դրանք պարտադրում են հրաժարվել ցանկալիից հանուն ընդհանուր շահի:Դրանք տարբեր են ոչ միայն տարբեր հասարակություններում, այլև անգամ հասարակության տարբեր շրջանակներում,նույն երկրի տարբեր տարածքներում:Նորմերը տարբեր են քաղաքում և գյուղում: Էթիկական նորմերը մեզ թելադրում են վարքագիծ, և որքան դրանք ավելի պահանջկոտ են, այնքան ավելի լուրջ արժեհամակարգ է պետք ձևավորել, որպեսզի մարդը բնականորեն դրանց համապատասխանի:Զարգացած մշակույթները ունեն զարգացած էթիկական նորմեր:Երբ դրանք քայքայվում են, պահանջները նվազում են, առաջանում են արժեհամակարգային խնդիրներ:Ահա թե ինչու առաջին հայացքից անվտանգ թվացող տարատեսակ «ազատությունները» իրենց հետ մեծ վտանգներ են բերում: Հիմա անդրադառնանք բարոյականությանը:Եթե էթիկական նորմերը ծառի արմատներն են, իսկ արժեքները՝ բույնը, ապա բարոյականությունը դրա սաղարթն է: Բարոյական է այն ամենը, ինչը նպաստում է արժեքների պահպանմանը և չի հակասում դրանց: Անբարոյական է այն ամենը, ինչը դեմ է արժեքներին և բերում է դրանց քայքայման:Օրինակ, ցանկացած հասարակության մեջ անբարոյական է դավաճանությունը միայն այն պատճառով, որ այն արժեզրկում է խոստումը: Եթե խոստումն արժեք չլինի, մարդկանց համակեցությունը կվերածվի մղձավանջի, քանի որ կվերանա փոխադարձ վստահությունը:Հենց դրանով է վտանգավոր, օրինակ, կոռուպցիան, քանի որ այն դավաճանություն է հանրությանը տված խոստմանը: Երբ փլուզվում են արժեքները,խախտվում է համակեցությունը և տարածվում անբարոյականությունը:Մարդիկ դժբախտանում են, տնտեսությունն անկում է ապրում,հանցագործությունները դառնում են համատարած, կյանքը կորցնում է իմաստի զգալի մասը, մարդիկ սկսում են հեշտությամբ իրար կոտորել:Հենց այս

պատճառով է, որ կրթության հենքը եւ գլխավոր իմաստը պետք է դառնա արժեհամակարգի ձևավորումը:Դպրոցը պետք է լինի օրինակելի տարածք, ուր հաստատուն են էթիկական նորմեր,ուր աշակերտները սովորում են դրանց համապատասխանել: Հաճախ դպրոցը ստիպված է պայքարել հանրության մեջ տարածված արատների դեմ և այդ պայքարում պարտավոր է հաղթել: Դպրոցում կյանքը չի կարող հեշտ լինել երեխայի համար.նա պետք է զգա և՛ ցավ, և՛ ուրախություն, ունենա թե՛ դժվարություններ, թե՛ հաղթանակներ: Դպրոցում աշակերտը պետք է ընկալի համակեցության նորմերի իմաստը և ընդունի դրանք: Այդ ամենի պտուղը կլինեն իրական արժեքները, այլ ոչ թե թելադրված, անգիր արած, բայց աշակերտի համար ոչինչ չնշանակող ճշմարտությունները: Եթե մենք կարողանանք կառուցել դպրոցներ, որոնք կձևավորեն արժեքներ աճող սերնդի համար, կունենանք աշխարհի ամենալավ և ամենահիմաստալից կրթական համակարգը:Եվ ամենից հաճախ այդ սպառողը դեռահասն է, ով չունի կայացած արժեհամակարգ, սոցիալական վարքի կարգավորման մեխանիզմներ, առավել հակված է ընդօրինակելու շրջապատին:Դեռահասության տարիքում (մասնագետների մեծամասնության կարծիքով՝ 12-16 տարեկան) է ձևավորվում մարդու աշխարհընկալման, աշխարհայացքի և, առհասարակ, առաջնային արժեքների համակարգը:Այս շրջանում անչափահասը սկսում է ակտիվորեն վերահիմաստավորել իր նախկին մոտեցումները, փորձում է դուրս գալ ավագների ազդեցության ոլորտից, նրա համար ավելի կարևոր է դառնում շրջապատի կարծիքը, փորձում է հարմարվել նրանց կողմից ընդունելի նորմերին և հաստատվել տարեկիցների միջավայրում:Իսկ դեռահասը վաղվա արժեքների կրողն է, ուստի կարևոր է այսօր արդեն նրան ներարկել առողջ արժեքներ,ապագայի հասարակության համար պատրաստել հայրենասեր, քաղաքակիրթ քաղաքացիներ: Անձի արժեքային համակարգի ձևավորման և շարժընթացի խնդիրը ընդունված է դիտարկել հոգեկան զարգացման ընդհանուր օրինաչափությունների համատեքստում:Այն անմիջականորեն կապված է տարիքային զարգացման առանձնահատկությունների հետ:Վերլուծելով անձի իմաստային ոլորտի ձևավորման և զարգացման խնդիրը՝ Ա. Սեռին պնդում է, որ այդ գործընթացները արտացոլում են տարիքային և անձնային զարգացման ընդհանուր օրինաչափությունները:Դ. Լեոնտևը նշում է, որ յուրաքանչյուր անձի զարգացման գործընթաց բնութագրվում է սոցիալական հանրության արժեքների և դրանց փոխակերպումների, այսինքն՝ անձնային արժեքների կերպափոխմամբ:Տվյալ խնդիրը ներկայացվել է հոգեբանության տարբեր դպրոցների և ուղղությունների ներկայացուցիչների կողմից: Անձն իր զարգացման ընթացքում ներգրավվում է

տարբեր փոքր և մեծ խմբերի մեջ:Դրանցից յուրաքանչյուրի կյանքում մասնակցությունն անհատի մեջ ձևավորում են որոշակի բնորոշ գծեր:Նրա անձնային հատկությունները ձևավորվում և զարգանում են կախված որոշակի սոցիալական շերտին, ազգին, էթնիկ խմբին, մասնագիտական կատեգորիային, ընտանիքին և այլ խմբերին պատկանելությունից: Աշխարհի մասին պատկերացումները, բարոյական հայացքները և համոզմունքները,մտածելակերպը և աշխարհայացքը, հետաքրքրությունները, ձգտումները և արժեքները պայմանավորվում են խմբային գիտակցության առանձնահատկություններով, որում անձը ձևավորվում է և որում ընթանում է նրա առօրյա գործունեությունը:Փոքր սոցիալական խումբը ոչ միայն անձին առաջարկում է որոշակի արժեքներ, այլև ինչ-որ չափով ազդում է անձի վրա՝ ուղղորդելով նրան դեպի այդ արժեքները: Մի կողմից խումբը և դրա առանձին անդամներն են ազդեցություն գործում անձի վրա, մյուս կողմից՝ անձն ինքն է ազդեցություն գործում խմբի մյուս անդամների և ամբողջ խմբի վրա: Հարմարվելով, ինտեգրվելով և անհատականանալով խմբում՝ յուրաքանչյուր անձ, իր հերթին, ազդեցություն է ունենում խմբի, դրա արժեքների, արժեքային կողմնորոշումների և արժեքային դիրքորոշումների վրա:Անձի արժեքային համակարգի ձևավորման գործում տեղեկույթի ազդեցության կառուցակարգերն անհրաժեշտ է առավել հանգամանորեն վերլուծել առանձին ուսումնասիրությունների շրջանակներում: Այսպիսով, ըստ մասնագիտական գրականության վերլուծության արդյունքների, անձնային արժեքների մասին պատկերացումները կարելի է ներկայացնել հինգ խմբով. արժեքը՝ որպես պատկերացում, դիրքորոշում, արժեքը՝ որպես պահանջմունք կամ շարժառիթ, արժեքը՝ որպես իմաստ և որպես հասարակության կենսագործունեության արդյունք:Անձի արժեքային համակարգի ձևավորման և շարժընթացի խնդիրը ընդունված է դիտարկել որպես հոգեկան զարգացման ընդհանուր օրինաչափություն:Այն անմիջականորեն կապված է տարիքային զարգացման առանձնահատկությունների հետ:Այդ գործընթացում հատկապես կարևորվում է ներքնայնացման գործընթացը՝ որպես սոցիալական խմբի արժեքներից անցում դեպի անձնային արժեքները:Արժեքային համակարգի ձևավորման գործում անհրաժեշտ է հաշվի առնել ինչպես օբյեկտիվ, այնպես էլ սուբյեկտիվ մի շարք գործոններ, որոնց թվում են սոցիալական պայմանները, անձի սոցիալականացման բնութագրիչները, շարժառիթային ոլորտի առանձնահատկությունները և անձնային բնութագրիչները:

ԳԼՈՒԽ 2

Արժեքային համակարգի ձևավորման գործընթացն ու յուրացումը

Փորձենք հասկանալ թե ի՞նչպես է ձևավորվում ազգային արժեքային համակարգը դասերին: Առարկան հնարավորություն կտա Հայաստանի Հանրապետության ապագա քաղաքացուն ձեռք բերած գիտելիքներն ու ճանաչողական հմտությունները, փորձը և անցյալի դասերը լավագույնս ծառայեցնել հզորացման և բարգավաճման ուղին բռնած Հայաստանի անկախ պետությանը,պատկերացում կազմել համաշխարհային պատմության մեջ Հայաստանի և հայ ժողովրդի զբաղեցրած տեղի ու դերի մասին: Հենց այս պատճառով է, որ կրթության զենքը և գլխավոր իմաստը պետք է դառնա արժեհամակարգի ձևավորումը:
Նախատեսվում է ,որ յուրաքանչյուր աշակերտ պետք է՝

- Լինի հայրենասեր և պատրաստ ծառայի հայրենիքի պաշտպանության գործին,
- Կարևորի ազգային հիմնախնդիրների լուծման գործում իր մասնակցության անհրաժեշտությունը,
- Ունենա ազգային ինքնագիտակցություն,
- Ունենա արդարության , լավատեսության և պատասխանատվության զգացում,
- Գիտակցի ներկան և ապագան կերտելու խնդրում ազգային պատմության դերը,
- Գիտակցի իր ժողովրդի նյութական և հոգևոր արժեքները պահպանելու անհրաժեշտությունը:

Գիտակցի, որ կյանքում իր համար կարևորագույն արժեքներից են լինելու գիտելիքները, աշխատանքային հմտությունները, մասնագիտական վարպետությունը և այլն…
Ուսուցման գործընթացում լուծվում են սովորողների կրթական, դաստիրակչական կամ արժեաքային և ընդհանուր զարգացման խնդիրներ: Դրա համար յուրաքանչյուր դաստիաստիրակչական խնդիրների լուծումը նախատեսում է ոչ թե մեկուսացված կամ առանձին մոտեցում, այլ գիտելիքների ու կարողությունների, արժեքային որակների, կամքի, բնավորության, զգացմունքների, հոգեբանական տարբեր դրսևորումների միաժամանակյա և փոխկապակցված մոտեցում:
ՈՒսուցման նպատակները բազմազան են ,սակայն առանձնացնենք նրանցից մեկը՝ զինել աշակերտներին ազգային արժեքներով:
Այդ նպատակին հասնելու համար անհրաժեշտ է լուծել կրթադաստիրակչական մի շարք կարևոր խնդիրներ:
1. Սովորողներին զինել հին, միջնադարի, նոր և նորագույն ժամանակների ամբողջական գիտելիքներով,որոնց միջով կարմիր թելով պետք է անցնի ազատության, անկախության, պետականության ստեղծման և ամրապնդման համար պայքարին սեփական մասնակցությունը բերելու գաղափարը: Այդ գիտելիքները մեծապես կօգնեն հասկանալ ու իմաստավորել հայ ժողովրդի անցյալն

ու ներկան, դասեր քաղել պատմությունից: Կօգնի մեր հանրապետության քաղաքացիներին կապվելու մայր հողին,տեր կանգնելու հայրենի տուն ու տեղին:
2. Ցույց տալ ազգային-ազատագրական պայքարի հերոսական դրվագները , հայ ժողովրդի խիզախ ու քաջարի զավակների անձնազոհ սխրանքները:
3. Գաղափար տալ հայ մշակույթի, քաղաքակրթության նրա առաջացման ու զարգացման օրինաչափությունների, առանձնահատկությունների մասին;

Այսպիսով, ըստ մասնագիտական գրականության վերլուծության արդյունքների, անձնային արժեքների մասին պատկերացումները կարելի է ներկայացնել հինգ խմբով. արժեքը՝ որպես պատկերացում, դիրքորոշում, արժեքը՝ որպես պահանջմունք կամ շարժառիթ, արժեքը՝ որպես իմաստ և որպես հասարակության կենսագործունեության արդյունք:

Անձի արժեքային համակարգի ձևավորման և շարժընթացի խնդիրը ընդունված է դիտարկել որպես հոգեկան զարգացման ընդհանուր օրինաչափություն: Այն անմիջականորեն կապված է տարիքային զարգացման առանձնահատկությունների հետ: Այդ գործընթացում հատկապես կարևորվում է ներքնայնացման գործընթացը՝ որպես սոցիալական խմբի արժեքներից անցում դեպի անձնային արժեքները:

Արժեքային համակարգի ձևավորման գործում անհրաժեշտ է հաշվի առնել ինչպես օբյեկտիվ, այնպես էլ սուբյեկտիվ մի շարք գործոններ, որոնց թվում են սոցիալական պայմանները, անձի սոցիալականացման բնութագրիչները, շարժառիթային ոլորտի առանձնահատկությունները և անձնային բնութագրիչները:

<<Ձեր համոզմունքները կերտում են ձեր մտքերը, ձեր մտքերը դառնում են ձեր խոսքերը, ձեր խոսքերը դառնում են ձեր գործողությունները, ձեր գործողությունները դառնում են ձեր սովորությունները, ձեր սովորությունները կերտում են ձեր արժեքները, ձեր արժեքները կերտում են ձեր ճակատագիրը>>:- ***Մահաթմա Գանդի***

<<Ոչ մի պաշտոն կամ կոչում չկա, որ հավասար լինի և կարելի լինի համեմատել մարդ կոչման հետ>>:-**Հովհաննես Թումանյան**

Մեր երկրում աշակերտների արժեքային համակարգի ձևավորումը ներառված է ՀՀ Հանրապետության պետական չափորոշչում՝ որպես կրթության բովանդակային բաղադրիչ: Յուրաքանչյուր ուսումնական առարկայի մասով սովորողների պատրաստվածությունը ներկայացվող գիտելիքային պահանջների մեջ առանձին կետով նաև նշվում է արժեքները եւ դրանց ձևավորումը,որոնք պետք է տա դպրոցը:

Արժեհամակարգի մեջ կուտակված է անցյալի փորձը, որի յուրացումը աշակերտների մեջ ձեւավորում է հայրենասիրության, սեփական ժողովրդի պատմության, նրա ստեղծած մշակութային արժեքների, գիտական նվաճումների համար հպարտության զգացում:

Արժեքների բուրգի գագաթին գտնվող նվիրական ու մեծագույն արժեքը՝ հայրենասիրությունն է:

Դ. Ս. Լիխաչևն իր «Նամակներ լավի և գեղեցիկի մասին» աշխատության մեջ որոշ կողմերից փորձում է բացահայտել մարդկային արժեքների գաղափարը: Նա ամենակարևոր արժեքը համարում է կյանքը ՝ ուրիշի, իր սեփական կենդանիները և բույսերը: Նա ասում է, որ կյանքը սահմաններ չունի, և պետք է սովորել զգալ և տեսնել ոչ նյութականը: Բարությունը սովորեցնող ժամանակը և արվեստը, ըստ Լիխաչովի, նույնպես ամենակարևոր արժեքներն են:

Առանձին ազգի համար արժեքը նրա մշակույթն ու լեզուն է, իսկ ողջ մարդկության համար՝ գեղեցկությունն ու սերը:

Շատ դժվար է խոսել մարդկային արժեքների մասին, քանի որ յուրաքանչյուրն ունի իր արժեքները: Արդյունքում ՝շատ դժվար է նաև ընդհանրացնել և կազմել համընդհանուր մարդկային արժեքների ցանկ: Որոշ փիլիսոփաներ ասում են, որ մարդկային համընդհանուր արժեքներն ընդհանրապես գոյություն չունեն: Բայց, այսպես թե այնպես, դրանք գոյություն ունեն մոլորակի վրա ապրող յուրաքանչյուր մարդու ներսում:

Յուրաքանչյուր անհատի արժեքների գերակայությունը տարբեր է: Ուստի կարող ենք ասել, որ կախված հասարակության նորմերից, մարդու շրջապատից և ընտանեկան կարգավիճակից արժեքային համակարգը ցանկացած մարդու համար անհատական է ու յուրովի:

Ուսուցչի քաղաքացիական դիրքորոշումը, ձգտումը՝ դաստիարակել բարձր արժեքներ կրող քաղաքացիներ, նրա մտահորիզոնը, հասարակական լայնախոհությունը, սերը երեխաների նկատմամբ ուսումնական գործընթացի արժեքային դաստիարակչական ներգործության բարձրացման կարևոր պայմաններից են: Ընդ որում՝ դաստիարակչական խնդիրների լուծումը պայմանավորված է նաև նրանով, որ ուսուցիչը համագործակցային փոխհարաբերությունների միջոցով նախատեսում է աշակերտների ոչ միայն մտավոր, այլև բարոյական, գեղագիտական ու ֆիզիկական դաստիարակության խնդիրների նկատմամբ համակողմանի մոտեցում:

Հայրենասիրական և բնապահպանական արժեքներն ընկալելու համար անհրաժեշտ է, որ

- խորհեն թեմայի շուրջ,
- գնահատեն իրենց արարքները,
- իմաստավորեն նրանց խնդիրները,
- համեմատեն իրենց կյանքը գրական կերպարների կյանքի հետ,
- ձգտեն կատարել իրենց ընկալած բարոյական նորմերին համապատասխան արարքներ:

Նպատակներից ամենակարևորը, զինելն է աշակերտներին ազգային արժեքներով: Մերօրյա իրականությունը թելադրում է հայ սերնդին, առավել քան երբեք, զինվել գիտելիքով և հայրենասիրությամբ՝ մեր թուլացած պետականության հիմքերը ամրապնդելու համար: Աչքի առաջ ունենալով ծանր պատերազմի հետևանքով ունեցած մեր կորուստները, և միևնույն ժամանակ մեր զինվորների կատարած հերոսական դրվագները, գալիք սերունդը պետք է լավ գիտակցի իր վրա դրված մեծ պատասխանատվությունը: Այս գործում շատ մեծ է ուսուցիչներիս դերը և մենք անելիքներ շատ ունենք մեր սերնդին հայրենասիրությամբ և ազգային արժեքներով դաստիարակելու գործում: Այստեղ անհրաժեշտ է նշել նաև միջառարկայական կապերի կարևորության մասին: Առարկաների ճիշտ համագործակցության շնորհիվ է, որ աշակերտների մոտ արժեքները ձևավորվում են ավելի ընդլայնված ու խորը: Կարող ենք նշել պատմություն առարկայի և գրականության կապը ներկայացնելով օրինակը <<Սասունցի Դավիթ>> էպոսը և արաբական արշավանքները: Էպոսում վեր է հանվում մի ամբողջ պատմական ժամանակահատված ներկայացնելով հայ ժողովրդի ազատատենչության գաղափարը: Գրականության միջոցով ներկայացվում է հերոսների հույզերը և զգացմունքները:Դարեր շարունակ էպոսը կրթել է մեր ժողովրդին՝ տալով նրան կատարյալ մարդու իր իդեալը՝ մանկական մաքուր պարզություն (անաղարտություն), արժանապատվություն, արդարամտություն, վեհանձնություն ունեցողին, որ նաև մարդասեր է, այլասեր, ժողովրդասեր, խաղաղասեր, ազատասեր, հայրենասեր, բարեկամասեր, եղբայրասեր և չարի դեմ պայքարող: Այն քրիստոնեական մեր էությունը բնութագրող կարևոր պայման է:Հավատի և հույսի հետ՝ նաև սեր...Այս արժեքներն են, որ փոխանցվում են աշակերտներին և ձևավորում ամուր ու կայուն արժեքային համակարգ:
Այստեղ հարկ է նաև նշել, որ ՅՈՒՆԵՍԿՕ-ն հայկական «Սասունցի Դավիթ» էպոսն ընդգրկել է մարդկության ոչ նյութական մշակութային ժառանգության ցուցակում: Մեր էպոսը ճանաչվել է որպես համամարդկային մշակութային արժեք:
Արժեհամակարգի ձևավորվան համար անփոխարինելի դեր և նշանակություն ունի հայոց լեզուն և գրականությունը: Առարկաների դասավանդման ժամանակ աշակերտները ծանոթանում են հայոց լեզվին և հայ գրականության մեծանուն

գրողների չնաշխարհիկ գործերին: Նրանց մոտ ձևավորվում է հատուկ վերաբերմունք դեպի համամարդկային արժեքները: Ռազմահայրենասիրություն, մշակութային արժեքներ, գեղագիտական արժեքներ, բարություն, ազնվություն, սեր, ճշմարտախոսություն, կամք, քաջություն, ազատություն....և այլ արժեքներ են սերմանում աշակերտների մեջ:
Բավական է նշել Եղիշե Չարենցի << Ես իմ անուշ Հայաստանի>> բանաստեղծությունը, որը ձևավորում է այնպիսի արժեքներ, ինչպիսիք են սեր առ հայրենիք և սեր դեպի հայոց մեծերը:
Մանկավարժական գործունեության մեջ մենք գործ ունենք մարդու հետ, ում պետք է առաջին հերթին *մարդ* մնալու արժեքը փոխանցենք: Եվ ինչպես ասել է մեծն Թումանյանը.

Անց ենք կենում… միայն անմահ

Գործն է խոսվում լավ ու վատ.

Մ՛խ, երանի՝ ո՛վ մարդ կգա

Ու մարդ կերթա անարատ:

Թումանյանի <<Թմկաբերդի առումը>> պոեմի գլխավոր միտքը *բարի գործի անմահության* գաղափարն է, որն ավելի խոր և ամբողջական է դառնում շնորհիվ պոեմում արտահայտված մյուս գաղափարների՝ հայրենասիրության և դավաճանության հակադրություն, սիրո ոգևորող և կործանիչ ուժի հաստատում, մարդկային կյանքի անցողիկության միտքը:
Յուրաքանչյուր դասի ժամանակ ուսուցիչը որոշակի դաստիարակչական խնդիրներ է լուծում՝ հաշվի առնելով տվյալ առարկայի և թեմայի ուսումնասիրման հիմնական խնդիրները, որոնք ներկայացված են առարկայական ծրագրերում: Նա առանձնացնում է ընդհանուր դաստիարակչական խնդիրները, որոնք առանձին աշակերտների մոտ հաճախակի են դրսևորվում:
Ուսուցիչը ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի ընտրության միջոցով (անհատական, խմբային, էքսկուրսիա, դասղեկական ժամ, արտադասարանական միջոցառումներ և այլն) առավել արդյունավետ է դարձնում աշակերտների արժեհամակարգային դաստիարակչական խնդիրների լուծումը: Օրինակ՝ խմբային աշխատանքի ժամանակ աշակերտները սովորում են ուշադրությամբ վերաբերվել միմյանց, միասին հաղթահարել դժվարությունները, միասին ձեռք բերել հաջողություններ, լսել հակադիր կարծիքներ, ընդօրինակել միմյանց և այլն:
Հասակակիցների խմբում աշակերտն ավելի ազատ է արտահայտում իր մտքերն ու դատողությունները, գործում է անկաշկանդ, ինչն էլ նպաստում է ուսուցման արդյունավետ կազմակերպմանը: Անհատական աշխատանքում դաստիարակվում է աշակերտների ինտելեկտուալ պատրաստականությունը դժվարությունները հաղթահարելու գործում, ձևավորվում են համառության, ինքնակազմակերպման և ինքնավերահսկման ընդունակություններ: «Հատկապես դեռահասների առանձնահատուկ զգացմունքայնությունը, ինքնասիրությունը, որ հաճախ արտահայտում է նրանց ինքնահաստատման և հասուն երևալու ձգտումը, մանկավարժից պահանջում է անհրաժեշտ նրբանկատություն, հարգանք դեռահասի անձի նկատմամբ»:

Գլուխ 3

Իմ փորձառությունը

Ստորև ներկայացնում եմ դասի պլան,որն իրականացրել եմ ութերորդ դասարանում:

Դ Ա Ս Ի Պ Լ Ա Ն

Ուսուցիչ _____

Առարկա՝ Նախնական զինվորական պատրաստություն	
Դասարան	8-րդ
Բաժին	**Հոգեբանական պատրաստություն հասկացությունը և տեսակները**
Թեմա	**Արժեքներ, վարքականոն, օրինակելի անձ: Հայ զինվորականի վարքականոնը:**
Դասի նպատակը	Սովորողներին գաղափար տալ հոգեբանական պատրաստության վերաբերյալ և նրանց մեջ ընդհանուր և հատուկ պատրաստությունների վերաբերյալ պատկերացումներ ձևավորել: Զարգացնել սովորողների հասարակական գիտակցությունը, ձևավորել նրանց մեջ հայրենասիրական համոզմունքներ և վարքագիծ:
Վերջնարդյունք	Գիտի՝ ինչ է հասարակական գիտակցությունը, արժեքները, վարքականոնը, օրինակելի անձը: Ունի իրենց նախընտրություններն այդ տեսանկյունից: Գիտի հայ զինվորականի վարքականոնը:
Անհրաժեշտ նյութեր	Դասագիրք:
Գնահատում	Ձևավորող գնահատում
Դասի սկիզբ	Դասը սկսում ենք մտագրոհով: Ի՞նչ է արժեքային համակարգը, ինչպե՞ս են հասկանում 'Հայրենիք' հասկացությունը, ինչպիսի՞ վարքականոն պետք է դրսևորի հայ զինվորականը, ի՞նչ է էթնիկական ինքնությունը:Աշակորտները պատասխանում են այս հարցերին :
Նոր նյութի ներկայացում	Այս փուլում ուսուցիչը գաղափար է տալիս

	հոգեբանական պատրաստության, հասարակական գիտակցության, արժեքների մասին:Աշակերտները լսում են, կատարում համապատասխան նշուներ տետրում:
ՈՒղղորդված աշխատանք	Աշակերտներին հնարավորություն է տրվում աշխատելու,օգտագործելու ներկայացված նոր նյութի գիտելիքները: Կատարում են խմբային աշխատանք, որտեղ գծապատկերի միջոցով ներկայացնում են հայ զինվորականին համապատասխանող հատկանիշներ:
Դասի ավարտ	Միասին կատարվում է նյութի վերլուծություն:
Տնային աշխատանք	Գրել շարադրություն 'Իմ Հայրենիք' վերնագրով:

Արժեհամակարգի ձևավորման, կրթության և դաստիարակության գործում լուրջ անելիքներ ունի հայ դպրոցը, որի գերնպատակն է կերտել բարոյական, ազգային արժեքներով օժտված, ազգային նկարագիր ունեցող սերունդ: Այս նպատակն իրագործելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել ու կատարելագործել ոչ միայն հայրենի և համաշխարհային գիտությունների ճյուղերը, այլև մանկավարժության անցյալի ժառանգությունն ու նրա ժամանակակից փորձն ու մեթոդաբանությունը:

Եզրակացություն

Ժամանակակից հասարակությունն արմատական փոփոխությունների մի բարդ շրջան է անցնում:Դա անմիջականորեն ազդում է երիտասարդ սերնդի մտածելակերպի, գործելակերպի, հոգեբանության և արժեքային կողմնորոշումների վրա: Նա այդ գործընթացների մասնակիցն է, այդ արժեքների ժառանգորդն ու կրողը:Նրա առջև ծառանում է նոր ժամանակի պահանջներին համապատասխան վերափոխվելու, կարողությունները զարգացնելու և իրացնելու խնդիրը: Ներկայումս կրթությունը վերաճել է մի գործոնի, որը նպաստում է հասարակության մեջ մարդու դերի առավել արժևորմանը՝ զարգացնելով համակեցության, հանդուրժողականության, համագործակցության և արժեքային անհրաժեշտ որակներ: Կրթական միջավայրի և կրթության բովանդակության արդիականացման անհրաժեշտությունը պահանջում է ուսուցման ավանդական մոտեցումների և մեթոդների վերանայում, կրթության նկատմամբ պետական և հասարակական հոգածության արմատական բարելավում: Արժեքային համակարգի ձևավորումը կարևորվում է նաև այն պատճառով, որ որոշակի արժեքային համակարգի հենքի վրա կառուցված գործողությունները ճանաչելի են և հետևաբար ընդունելի, քանզի դրանք սկիզբ են առնում ազգային, համամարդկային համընդհանուր սկզբունքներից, նորմերից և օրենքներից: Այս տեսանկյունից դիտարկելիս կարևոր է անհատ քաղաքացու արժեհամակարգի ձևավորումը:Կրթությունը մարդակենտրոն գործընթաց է, ազգի հիմքը կրթությունն է և ցանկացած լավ, բարի ու արժեքավոր բան, հենց կրթության միջոցով է,որ փոխանցվում է մարդկանց, տարածվում հասարակության մեջ, դաստիարակում մատաղ սերնդին: Կրթության ողնաշարը, կրթության առանցքը արժեհամակարգն է:Կարծում եմ, որ ցանկացած մարդու համար արժեքային համակարգն այն է,ինչ այդ մարդն ինքն իր համար արժեք է համարում: Մանկավարժը պետք է սեփական օրինակով դաստիարակի սանին, օրինակ ծառայի, որովհետև օրինակի ուժը զորավոր է: Մեր էպոսի հերոսները այսօրվա տասնհինգ տարեկաններին էլ են ոգեշնչում: Հասարակության և յուրաքանչյուր անհատի բարեկեցիկ կենսակերպի ձևավորման և ապահովման համար Հայաստանի Հանրապետության հանրակրթական դպրոցներում արժեքային որոշակի համակարգի առկայությունը կրթության բովանդակության անհրաժեշտ բաղադրիչներից մեկը դարձավ,որը սովորողներին պետք է փոխանցեր գիտելիքներ, կարողություն-հմտություններ, որոնք ուղղված լինեն ընդհանրական համակարգված արժեքային հիմքերի ձևավորմանը և դրանով՝ պետության, ազգի և անհատի ներդաշնակ փոխհարաբերության ապահովմանը:Քսաներորդ դարավերջի և քսանմեկերորդ դարասկզբի քաղաքացին հասկանում էր, որ այն երկիրն է հավակնում ունենալ լավ կրթական համակարգ,որը ոչ միայն գիտելիքի փոխանցումը, կարողություն-հմտության ձևավորումն է ապահովում, այլև իսկապես պատասխան է տալիս սովորողի արժեքային վերջնարդյունքների մասին բոլոր հիմնահարցերին:Դրանք էին՝

●լինի հայրենասեր, օրինապահ, ազնիվ, մարդասեր, պատասխանատվությամբ օժտված, նախաձեռնող ու հասարակական գործուն դիրքորոշում ունեցող քաղաքացի,
●դրսևորի փոխըմբռնում և կարողանա համագործակցել ինչպես տարեկիցների, այնպես էլ ծնողների, իրենից մեծերի ու փոքրերի հետ և այլն:

Յուրաքանչյուր ուսուցչի առջև կանգնում է իր առարկայի ուսումնական դասընթացի նյութերով արժեքների համակարգի ձևավորման, սովորողների անձի դաստիարակության խիստ բարդ խնդիրը:Որպեսզի յուրաքանչյուր ուսումնական առարկա յուրաքանչյուր սովորողի համար անձնային նշանակություն ստանա, անհրաժեշտ է,որ դասի ընթացքում ստեղծվի ստեղծագործական, համագործակցության մթնոլորտ, խրախուսվի իմացական ցանկացած գործընթաց, խրախուսվի յուրաքանչյուր նախաձեռնություն, յուրաքանչյուր իմացական փորձ: Համաշխարհայնացման պայմաններում մենք անպայման պետք է հաշվի առնենք եվրոպական առանցքային կոմպետենցիաները՝ բայց միշտ հիշելով, որ չի կարելի ստեղծել «ամորֆ մարդ, գործարանային արդյունք», այլ՝ հայ մարդ, հայ քաղաքացի, որն ապրում է քսանմեկերորդ դարում: Կրթական տիեզերական դաշտի մեջ մենք պետք է կարողանանք մեր տեսակետը հաստատել:

Գրականության ցանկ

1. Բաբանսկի Յու. -Աշակերտների դաստիրակությունը կոմպլեքսային Մոտեցում:
2 .Ա. Գևորգյան, Ազգային կրթության դերն ու նշանակությունը սովորողների հայեցի դաստիարակության գործընթացում, Եր., 2002,:
3. Մուդրիկ Ա. Վ., Դպրոցականի անձը և նրա դաստիարակությունը կոլեկտիվում, Երևան, 1986թ., 86 էջ:
4. . Իլյինսկի Ի., Ռուսաստանի կրթության «արդիականացումը» համաշխարհային գլոբալացման համատեքստում, «Կրթությունը XXI դարում» գիտակրթական հանդես, N1, էջ 50-83, Երևան, 2014 թ.:
5. Մանասյան Ն., Հանրակրթության արժեքային համակարգը, «Մանկավարժություն» գիտամեթոդական վերլուծական ամսագիր, 2004թ., N1/2, էջ 6-15: